

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» փետրվարի 2014 թ.

N 52-Ա

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՈՒՂՂՎԱԾ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 14-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1-Ն որոշման 11-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻՐ
**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՈՒՂՂՎԱԾ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2014 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) նպատակաուղղված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (այսուհետ՝ ԼՂՀ) տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը, գործարար միջավայրի բարելավմանը, տնտեսվարող սուբյեկտների արտահանման կարողությունների զարգացմանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացմանը, որակի ենթակառուցվածքների զարգացմանը:

Ծրագրով սահմանվում են ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից 2014 թվականին իրականացվելիք հետևյալ միջոցառումները, դրանց նպատակները, իրագործման մեխանիզմները և ֆինանսավորման աղբյուրները.

1. տնտեսական համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպմանն աջակցություն.
2. պետական աջակցություն «Արցախի գործարարների (գործատուների) միություն» իրավաբանական անձանց միությանը.
3. սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի տեխնիկական վերազինմանն աջակցություն.
4. տնտեսական վերլուծությունների, հետազոտությունների իրականացման ծառայությունների ձեռքբերում.
5. ԼՂՀ տնտեսվարող սուբյեկտների արտադրանքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող ինտերնետային կայքի մասին տվյալների տարածում.
6. ԼՂՀ տնտեսվարող սուբյեկտների արտահանմանն աջակցություն:

Ծրագրի իրականացմամբ ակնկալվում է կայուն տնտեսական զարգացման ապահովման միջոցով հիմքեր ստեղծել տնտեսության հեռանկարային զարգացման, բնակչության կենսապայմանների բարելավման և հաստատուն առաջընթացի, ինչպես նաև բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացման համար, ինչը ամրագրված է ԼՂՀ կառավարության գործունեության 2012-2017 թվականների ծրագրում:

Ծրագրով սահմանված միջոցառումները համատեղ նպատակաուղղված լինելով տնտեսության զարգացմանը, բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացմանը, միաժամանակ կարելի է համարել առանձին անկախ ծրագրեր, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր նպատակները,

սկզբունքները, իրականացման մեխանիզմները, գործարկման մեկը մյուսով չպայմանավորված ժամկետը և ակնկալվող արդյունքները: Դրանով էլ պայմանավորված որոշ միջոցառումների նկարագրությունում կիրառվում է նաև ծրագիր հասկացությունը:

II ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագրի շրջանակում ֆինանսական աջակցություն կցուցաբերվի ԼՂՀ-ում տնտեսական համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպմանը, ինչը կարևոր գործոն է հանդիսանում տնտեսության ներուժի, կարողությունների և ձեռքբերումների ցուցադրման, առանձին ընկերությունների կողմից իրենց ծրագրային փաթեթների և ծառայությունների ներկայացման և բիզնես կապերի ստեղծման, ինչպես նաև վերջին միջազգային նորարարական նվաճումներին ծանոթանալու և ուսումնասիրություններ կատարելու համար: Դրանք կնպաստեն նաև իրազեկվածության բարձրացմանը և գործարարների միջև ներքին կապերի ամրապնդմանը:

Սույն ծրագրի շրջանակում պետական ֆինանսական աջակցությունն ուղղված կլինի տնտեսական համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպման համար պահանջվող ծախսերի մասնակի հատուցմանն ու Նախարարության հետ համատեղ ծրագրերի համաֆինանսավորմանը՝ գործարար շրջանակների և հասարակական կազմակերպությունների ու միությունների կողմից ներկայացված հայտերի, ինչպես նաև համապատասխան դիմումների հիման վրա՝ կցելով համաֆինանսավորման ծրագրի նախահաշիվը:

2. ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐՑԱԽԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ (ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ) ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ

ԼՂՀ կառավարությունը կարևորում է գործարար միավորումների դերը, որպես ժամանակակից բիզնես միջավայրի հիմնարար տարրերից մեկը, որոնք ներկայացնում և պաշտպանում են մասնավոր հատվածի կոլեկտիվ շահերը և միաժամանակ կարող են ակտիվ մասնակցել պետական տնտեսական քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին՝ դրանով իսկ ապահովելով պետություն-մասնավոր հատված համագործակցությունը և պետական ու մասնավոր շահերի հավասարակշռվածությունը: 2014 թվականին ԼՂՀ կառավարության կողմից կշարունակվի «Արցախի գործարարների (գործատուների) միություն» իրավաբանական անձանց միությանը աջակցության ծրագիրը:

Միությանը կտրամադրվի պետական ֆինանսական աջակցություն՝ Ծրագրի հավելվածում նշված գումարի չափով:

3. ՄՆՆԴԱՍԹԵՐՔԻ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից է հանդիսանում պետության և սպառողների շահերի պաշտպանությունը արտադրանքի, ծառայությունների անվտանգության, համապատասխանության հավաստման և որակի ապահովման հարցերում: Նշված և այլ խնդիրների լուծման նպատակով հիմնադրված «Ստանդարտացման, չափազիտության և սերտիֆիկացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության լաբորատորիաների աշխատանքների լիարժեքության

ապահովման նպատակով ԼՂՀ կառավարությունը սույն միջոցառման իրականացմամբ կշարունակի ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ լաբորատորիաների տեխնիկական վերազինմանը:

4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

Կարևորելով տնտեսության, նրա առանձին ճյուղերի զարգացման գործում ռազմավարական ծրագրերի, տնտեսական վերլուծությունների, հետազոտությունների դերը՝ ԼՂՀ կառավարությունը սույն ծրագրային միջոցառման շրջանակում կցուցաբերի պետական ֆինանսական աջակցություն ԼՂՀ տնտեսության, դրա առանձին ճյուղերի զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տնտեսական վերլուծությունների, հետազոտությունների, նախագծային աշխատանքների կատարմանը, ինչպես նաև գործարար ծրագրերի մշակմանը:

Սույն ծրագրային միջոցառումը կիրականացվի ԼՂՀ կառավարության կողմից սահմանված կարգին համապատասխան:

5. ԼՂՀ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

Արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հիմնական գրավականներից է թողարկվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների) պատշաճ մակարդակով շուկաներում առաջ մղելը, ինչպես նաև հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացումը և ապահովվումը: Սույն ծրագրի շրջանակում պետական ֆինանսական աջակցությունն ուղղված կլինի ԼՂՀ տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվող արտադրանքի (մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների) վերաբերյալ տեղեկություններ պարունակող ինտերնետային կայքի մասին տվյալների տարածմանը, ինչը խթան կհանդիսանա ապրանքների և ծառայությունների իրացման, ինչպես նաև արտահանման, ներդրումային գրավչության բարձրացման համար:

6. ԼՂՀ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրը նպատակ է հետապնդում զարգացնել ԼՂՀ տնտեսվարող սուբյեկտների արտահանման կարողությունները: Աջակցությունն ուղղված կլինի ԼՂՀ արդյունաբերական կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև գյուղատնտեսական արտադրանք արտադրողների կողմից արտադրվող ապրանքների համար արտահանվող երկրի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներմուծման և/կամ իրացման համապատասխանության սերտիֆիկատի կամ այլ համարժեք փաստաթղթերի ստացման համար կատարված ծախսերի մասնակի հատուցմանը:

Մեկ օրացուցային տարվա ընթացքում կազմակերպությունը կարող է ստանալ աջակցություն նույն տարում ստացած սերտիֆիկատների համար (դրանց գործողության ամբողջ ժամկետով), յուրաքանչյուր սերտիֆիկատի ստացման համար ծախսված գումարի 50 տոկոսի չափով: Գումարի չափը հաշվարկվում է հայտի ներկայացման օրվա համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

Ֆինանսավորման ենթակա սերտիֆիկացման ծախսերն են՝

- 1) լաբորատոր փորձարկման նպատակով կազմակերպության կողմից կատարված ծախսերը,
- 2) սերտիֆիկացնող մարմնի կողմից համապատասխան սերտիֆիկատի տրամադրման համար վճարը:
Ֆինանսավորման ենթակա չեն կատարված վարչատնտեսական ծախսերը:
Հայտի ներկայացման կարգը և ներկայացվող փաստաթղթերի ձևերը սահմանում է Նախարարությունը:

III ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրային միջոցառումների անվանացանկը և ֆինանսավորման աղբյուրները ներկայացված են Ծրագրի հավելվածում:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

